ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 02 » մարտի 2017թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-80/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2016թ. թիվ 1/73-1/6334-16 և 16.03.2016թ. թիվ 1/73-1/9791-16 գրություններով ներկայացված «Լեվ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.02.2016թ. թիվ 01/61-1848 և 11.03.2016թ. թիվ 01/61-3878 գրությունների հիման վրա, 22.02.2016թ. N 1/73-1/6334-16 և 16.03.2016թ. N 1/73-1/9791-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝

Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Լեվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Լեվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով, 29.02.2016թ. թիվ 01/04.1/712-16 գրությամբ դիմել է «Լեվ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրության՝ «Լեվ» ՍՊԸ-ն 10.03.2016թ. թիվ 0-07 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 2016թ. հունվարի 25-ին մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված մրցույթին, որին հաղթող է ճանաչվել «Լեվ» ՍՊԸ-ն: Հետագայում 30.01.2016թ. հայտարարվում է, որ «Լեվ» ՍՊԸ-ն հանվել է մրցույթի մասնակիցների ցուցակից, քանի որ Արաբկիրի հարկային տեսչությունը հայտ է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն, որ ս/թ հունվարի 25-ի դրությամբ կազմակերպությունը շահութահարկի մասով ունի 113000 դրամի հարկային պարտավորություն:

«Լեվ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ ս/թ փետրվարի 1-ին կազմակերպությունը ներկայացրել է տարեկան հաշվետվություն և դիմել է ՀՏ՝ տրամադրելու փոխադարձ հարկերի վիճակի մասին տեղեկանք: Ըստ տրամադրված տեղեկանքի՝ կազմակերպությունը փետրվարի 1-ի դրությամբ շահութահարկի մասով ունի 1 075 000 դրամի գերավճար:

Նկատի ունենալով, որ կազմակերպությունը թյուրմիացաբար զրկել են մրցույթում հաղթողի կարգավիճակից և հանել են մրցույթի մասնակիցների ցուցակից, «Լեվ» ՍՊԸ-ն Կենտրոնին խնդրել է հաշվի առնել կազմակերպության երկար տարիների բարեխիղճ աշխատանքը և թույլատրել կազմակերպությանը մասնակցելու հետագա մրցույթներին:

«Լեվ» ՍՊԸ-ն 01.12.2016թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության կողմից 01.12.2016թ. տրամադրված թիվ 7525 տեղեկանքը, համաձայն որի՝ «Լեվ» ՍՊԸ-ն

հայտը ներկայացնելու օրվա (25.01.2016թ.) դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

2. ***Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ***

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 22.03.2016թ. թիվ 01/04.1/1107-16 գրությամբ դիմել է «Լեվ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրության՝ «Լեվ» ՍՊԸ-ն 29.03.2016թ. թիվ 0-07 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 2016թ. փետրվարի 24-ին մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52» ծածկագրով մրցույթին: «Լեվ» ՍՊԸ-ն նշել է, որ երկար տարիներ մասնակցել է տարբեր մրցույթների, սակայն չի իմացել, որ կազմակերպությունը իրավունք չունի մասնակցել վերոհիշյալ մրցույթին, քանի որ համախառն եկամուտը երեք տարիների ընթացքում կազմել է 220 մլն. դրամ: Ընկերությունը գիտեր, որ կազմակերպությանը տուժանք է հասնում՝ մրցույթից հրաժարվելու, հարկային պարտավորությունները չկատարելու, աշխատանքներն անորակ, ոչ պատշաճ կատարելու դեպքում:

Նկատի ունենալով, որ կազմակերպությունը հաղթող չի ճանաչվել, կատարվածը թյուրիմացություն է, «Լեվ» ՍՊԸ-ն Կենտրոնին խնդրել է հաշվի առնել կազմակերպության երկար տարիների բարեխիղճ աշխատանքը և թույլատրել կազմակերպությանը մասնակցելու հետագա մրցույթներին:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

Երևանի քաղաքապետարանը 09.02.2016թ. թիվ 01/61-1848 և 11.03.2016թ. թիվ 01/61-3878 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել, համապատասխանաբար, «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/15» և «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52» ծածկագրերով բաց ընթացակարգերին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

4. **<u>ՍՑ-ԳԲԽ-80/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2016թ. թիվ 1/73-1/6334-16 և 16.03.2016թ. թիվ 1/73-1/9791-16 գրություններով ներկայացված «Լեվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով ընթացակարգ

- Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի թվով 10 պտտվող կարուսելների ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով «Լեվ» ՍՊԸ-ն ***25.01.2016թ.*** հայտ է ներկայացրել:
- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***
- Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 29.01.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Լեվ» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուն 03.02.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Լեվ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 113,325 ՀՀ դրամի չափով:***
- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 04.02.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Լեվ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

- «Լեվ» ՍՊԸ-ն 01.12.2016թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության կողմից 01.12.2016թ. տրամադրված թիվ 7525 տեղեկանքը, որի համաձայն՝ «Լեվ» ՍՊԸ-ն ***25.01.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***
- Կենտրոնը 05.12.2016թ. թիվ 01/04.2/4430-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով հայտնել, «Լեվ» ՍՊԸ-ն ***25.01.2016թ.*** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:
- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 19.01.2017թ. թիվ 05/350-17 գրությամբ հայտնել է, որ «Լեվ» ՍՊԸ-ն ***25.01.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:***

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52» ծածկագրով ընթացակարգ

- Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի հ. 88 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով ***23.02.2016թ.*** հայտ է ներկայացրել «Լեվ» ՍՊԸ-ն, որը ներկայացրել է գնային առաջարկ՝ ***270,720,146 ՀՀ դրամ*** (մեկ չափաբաժին):
- Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***
- Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 26.02.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Լեվ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ:

- Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 01.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Լեվ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ***207,520,720 ՀՀ դրամ***:
- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2016թ. ժամը 10:00 կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Լեվ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (207,520,720 ՀՀ դրամ) պակաս է ներկայացված գնային առաջարկից (270,720,146 ՀՀ դրամ) և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Լեվ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-80/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի 09.02.2016թ. թիվ 01/61-1848 և 11.03.2016թ. թիվ 01/61-3878 գրությունները և կից փաստաթղթերը, «Լեվ» ՍՊԸ-ի 10.03.2016թ. թիվ 0-07 և 29.03.2016թ. թիվ 0-07 գրությունները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

- 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
- 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:
- 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:
- 67-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
- 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

➢ ***Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ***

«Լեվ» ՍՊԸ-ն ***25.01.2016թ.*** մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/15» ծածկագրով բաց ընթացակարգին:

Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.02.2016թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա (25.01.2016թ.) դրությամբ ունեցել է 113,325 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հանգամանքը, 04.02.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Լեվ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Միևնույն ժամանակ Կենտրոնը արձանագրում է, որ «Լեվ» ՍՊԸ-ի կողմից 01.12.2016թ. գրությամբ ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչության կողմից 01.12.2016թ. տրամադրված թիվ 7525 տեղեկանքը, որի համաձայն՝ «Լեվ» ՍՊԸ-ն ***25.01.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***

Կենտրոնը 05.12.2016թ. թիվ 01/04.2/4430-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե խնդրելով հայտնել «Լեվ» ՍՊԸ-ն ***25.01.2016թ.***

դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 19.01.2017թ. թիվ 05/350-17 գրությամբ հայտնել է նաև, որ հիմք ընդունելով Արաբկիրի ՀՏ-ի կողմից 16.12.2016թ. գրությամբ տրամադրած տեղեկատվությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում ***25.01.2016թ.*** դրությամբ «Լեվ» ՍՊԸ-ն ***չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ***:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 19.01.2017թ. թիվ 05/350-17 գրությունը, որի համաձայն՝ «Լեվ» ՍՊԸ-ն ***25.01.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ,*** Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2016թ. N 1/73-1/6334-16 գրությամբ ներկայացված «Լեվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

➢ ***Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ***

«Լեվ» ՍՊԸ-ն ***23.02.2016թ.*** մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52» ծածկագրով բաց ընթացակարգին:

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 26.02.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Լեվ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 01.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Լեվ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է ***207,520,720 ՀՀ դրամ***:

Ընկերությունը Ընթացակարգ 2-րդի մասնակցության հայտի N 3.4 հավելվածով՝ Ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն***

եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2016թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Լեվ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (207,520,720 ՀՀ դրամ) պակաս է ներկայացված գնային առաջարկից (270,720,146 ՀՀ դրամ):

Կենտրոնը գտնում է, որ «Լեվ» ՍՊԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում 23.02.2016թ. հայտի 3.4 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Լեվ» ՍՊԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Լեվ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ ***23.02.2016թ***.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2016թ. թիվ 1/73-1/9791-16 գրությամբ ներկայացված «Լեվ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00802844) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2016թ. թիվ 1/73-1/6334-16 և 16.03.2016թ. թիվ 1/73-1/9791-16 գրություններով ներկայացված «Լեվ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00802844) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Ռ. Մկրտչյան

Վերապատրաստումների և խորհրդատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Կատվալյան